

Նոր գրականություն

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ
(1889 - 1967)

Ստեփան Զորյանը նորագույն շրջանի հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից է: Նա զարգացման նոր աստիճանի բարձրացրեց *պատմվածքի և նորավեպի ժանրային ընդգրկումը*՝ «փոքր տարածքում» ստեղծելով տպավորիչ այնպիսի պատկերներ, որոնք ներկայացնում են, այսպես կոչված, «*տխուր*», «*փոքր մարդուն*»՝ իր հոգեկան խեղճությամբ ու ներքին անազատություններով:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփան Զորյանը (Առաքելյան) ծնվել է 1889-ի սեպտեմբերի 15-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Իսկական ազգանունը եղել է **Առաքելյան**, որը, հավանաբար բարեհնչյունության համար, հետագայում փոխել է ***Զորյանի***:

Հայրը՝ Եղիան, հողագործ էր, մայրը՝ Եղիսաբեթը՝ տնային տնտեսուհի: Ստեփանը դեռ մանկուց սիրել է կենդանիներ, դաշտ և անտառ, սարեր, ընկերների հետ վազվզել է լեռնահովտում, որոնել նորանոր աղբյուրներ, հատապտուղ հավաքել և հիացել խայտացող եղնիկներով...

«Ղարաքիլիսայում,- պատմում է Զորյանը «Ինքնակենսագրական նոթեր»-ում,- կային հայկական հաստատուն սովորույթներ, ուր կրոնական ու ժողովրդական տոները, ծեսերը կատարվում էին ամենայն ճշտապահությամբ, ջերմեռանդությամբ ու մեծ շուքով»: «Այս ամենի հետ միասին,- շարունակում է նա,- մեր ավանում կար մի տիրող զգացմունք՝ զարմանալի հայրենասիրություն. բոլոր տներում կախված էր «Ոգի Հայաստանի» նկարը՝ Անիի շքեղ ավերակների մեջ նստած մի սգավոր կին, որ հիշեցնում էր հայրենի երկրի երբեմնի անկախությունը և անցած փառքը, նաև 5-րդ դարի ազգային մեծ հերոս Վարդան Մամիկոնյանի սաղավարտով դիմանկարը՝ որպես անձնազոհ հայրենասիրության սիմվոլ»:

Ազգային նվիրական այսպիսի հիշատակներով ապրող միջավայրում են անցել փոքրիկ Ստեփանի մանկությունն ու պատանեկությունը: Այդ ամենին գումարվել են նաև տատի և մոր պատմած զարմանահրաշ հեքիաթները, հատկապես մոր, որ «շատ ինքնատիպ ու կոլորիտով պատմող կին էր, և իր այդ պատմությունների համար հարևանությամբ ապրող ուսուցչուհիները նրան կոչում էին «*տիկին Հոմերոս*»»: Ձմռան երկար գիշերներին նա իր շուրջն է հավաքել բոլոր՝ յոթ երեխաներին (չորս տղա և երեք աղջիկ), և պատմել գեղեցիկ հեքիաթներ ու հետաքրքրաշարժ զրույցներ...

Ստեփանը գրաճանաչ է դառնում տանը, իսկ յոթ տարեկանից հաճախում է հայկական մասնավոր մի դպրոց, ուր Զաքար վարժապետի մոտ սովորում է երկու տարի: Այն գործում էր գաղտնի, քանի որ ցարական իշխանությունները փակել էին հայկական դպրոցները: Այդ ժամանակից սկսած՝ Ստեփանն սկսում է կարդալ հայ և ռուս գրողների գրքերը. ընթերցում էր իրենց տնակում, անհագաբար՝ մինչև լուսաբաց: «Այժմ,- հիշում է Զորյանը,- երբ ետ եմ նայում կյանքիս անցած ճանապարհին, ինձ թվում է, թե իմ ամենաերջանիկ օրերն անցան այդ խարխուլ, անզարդ տնակում, երբ ես, ամեն հոգսից ազատ,

ամբողջովին իմ սիրած գրքերի հետ էի և պատրանքներով լցնում էի մեր պարտեզը, մանավանդ լուսնյակ գիշերներին»: Այդ շրջանում նրա նախընտրած հեղինակներն էին Աբովյանը և Ռաֆֆին, Պուշկինն ու Լերմոնտովը, Գոգոլը:

Հայկական դպրոցներն այդպես էլ չեն վերաբացվում, և գեղջուկ հայրը որդուն ստիպված տանում է ռուսական դպրոց՝ նախապես հիշեցնելով. «Գնա՛, որդի՛, լա՛վ սովորիր ամեն ինչ, բայց երբեք չմոռանաս, որ դու հայ ես, հայոց լեզուն ամենից լավ պիտի սովորես»: Եվ Զորյանն իր գիտակցական ամբողջ կյանքում հավատարիմ է մնում հոր պատգամին: «Լեզուն, իրոք, մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Նա է ուրախության պահին բացում մեր սիրտը, իսկ տրտմության ժամին նա է սփոփում մեզ,- հետագայում նկատում է գրողը: Նա համոզված էր, որ ընդհանրապես «իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց»:

1904-ին ավարտելով ռուսական դպրոցը՝ Ներսիսյան դպրոցում կրթությունը շարունակելու նպատակով Ստեփանը 1906-ին մեկնում է Թիֆլիս, սակայն ուշանալու պատճառով չի ընդունվում: Համառ ինքնուսուցմամբ ձեռք է բերում գիտելիքների պաշար:

Երիտասարդ Զորյանը Թիֆլիսում աշխատել է զանազան թերթերում («Սուրհանդակ», «Մշակ»)՝ սկզբում՝ որպես սրբագրիչ, ապա՝ թարգմանիչ, հետագայում՝ գրական աշխատող և լրագրող: Վրաց մայրաքաղաքը վճռական նշանակություն է ունեցել երիտասարդ գրողի հոգևոր աշխարհի ձևավորման ու հարստացման առումով: Այնտեղ նա ձեռք է բերում ոչ միայն գրական ճաշակ, այլև ստանում է կյանքի զանազան տպավորությունների հարուստ պաշար:

Զորյանը 1919-ին տեղափոխվում է Երևան, կատարում գրական, թարգմանական և հրատարակչական զանազան աշխատանքներ: 1925-ին ամուսնանում է մի բարեկիրթ օրիորդի՝ Սաթենիկ Սանամյանի հետ, ունենում երկու որդի (Լևոն և Կարեն), որոնք հետագայում դառնում են նշանավոր ճարտարապետներ: Ստեփան Զորյանը 1965-ին ընտրվում է Խորհրդային Հայաստանի ԳԱ ակադեմիկոս:

Վախճանվել է 78 տարեկանում՝ 1967 թվականի հոկտեմբերի 14-ին, Երևանում և թաղվել Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

1909 թ. Թիֆլիսի «Լումա» ամսագրում լույս է տեսնում Զորյանի առաջին պատմվածքը՝ «*Քաղցածները*», իսկ 1918-ին՝ առաջին ժողովածուն՝ «*Տխուր մարդիկ*» խորագրով:

Ստեփան Զորյանի առաջին իսկ ստեղծագործությունները ջերմորեն ընդունվեցին ժողովրդի և հայ գրողների ընտանիքի կողմից: Նրան նկատեցին ու սիրեցին Հովհաննես Թումանյանն ու Շիրվանզադեն, Վահան Տերյանն ու Դերենիկ Դեմիրճյանը, Վրթանես Փափազյանը, Նար-Դոսը և ուրիշները: Ո՞րն էր այդ սիրո գաղտնիքը: Սկսնակ գրողը, հմտորեն յուրացնելով հայրենի (Նար-Դոս, Գրիգոր Զոհրապ...) և համաշխարհային գրականության (Գի դը Մոպասան, Անտոն Չեխով...)՝ փոքր արձակի բնագավառում կուտակած հարուստ փորձը, իր սրատես հայացքով որսաց նորը, այն փոփոխությունները, որոնք ընդլայնեցին պատմվածքի և նովելի թեմատիկ շրջանակները: «Դուք մեր ապագա վիպասաններից մեկն եք լինելու»,- ջերմորեն նկատում է Հովհաննես Թումանյանը: Իսկ Զորյանի առաջին ժողովածուի մասին Դերենիկ Դեմիրճյանը գրում է. «Այս գրքում ես զգում եմ մեր ազգային գրականության և եվրոպական գրական ձևերի համադրությունը, մի բան, որ մինչև այժմ մենք չունեինք: Հայկական արձակում ազգային ձևի սկզբնավորողը եղավ Աբովյանը, շարունակողը՝ գյուղագիրները, իսկ եվրոպական ձևին հիմք դրեց Շիրվանզադեն: *Այդ երկու ձևերի համադրությունը առաջին անգամ տեսնում ենք այս փոքրիկ գրքույկում*»:

Կիրառելով ռուս նշանավոր գրող Անտոն Չեխովի արվեստի սկզբունքները՝ հայ արձակագիրը «Տխուր մարդիկ» պատմվածաշարում պատկերում է հերոսներ, որոնք իրենց անհամարձակ արտաքինի տակ խեղճ են և անօգնական, ապրում են ճղճիմ հոգսերի մեջ: «*Ցանկապատը*» և «*Խնձորի այգին*» շարքերում պատկերվում են սեփականատիրական կրքից կուրացած մարդիկ, որոնք մի դեպքում ցանկապատել են իրենց սովորական հարաբերությունները, մյուս դեպքում առաջնորդվում են գոյության գայլային սկզբունքներով՝ այդպես էլ անհաղորդ մնալով ազնիվ և անշահասեր հոգիների տանջանքներին: Մարդկային ագահությունից ու շահի մոլուցքից անգամ «հիասթափվում է» հարազատ եղբայրների աչքածակության կիզակետում հայտնված կովը՝ Ծովանը համանուն պատմվածքում: «Օ՜, տխուր է մարդկանց աշխարհը»,- «մտածում է» կենդանին:

Նորագույն շրջանի հայ գրականության մի ուրիշ երանգ էր բերում «*Պատերազմը*» պատմվածաշարը: Այնտեղ կան խիստ ազդեցիկ գործեր

(«Պատերազմը», «Զաքարի հարսը», «Ջրհորի մոտ»...), որոնք պատկերում են ոչ թե պատերազմի դաշտը, այլ *պատերազմի բերած աղետալի հետևանքները մարդկանց հոգիներում*: Պատերազմը ծանր հետևանքներ է թողնում անգամ *կենդանու հոգեբանության վրա*: Այս տեսակետից չափազանց հուզիչ է «*Շունը*» փոքրիկ պատմվածքը:

Զորյանը չափազանց լրջորեն է վերաբերվել գրական երկի ստեղծմանը՝ այն նմանեցնելով տան կառույցին. «Ես, իմ մասին խոսելով, պիտի ասեմ, որ և՛ գրի եմ առնում որոշ դիտողություններ, և՛ մտքումս կազմակերպում եմ ամբողջ գործը: Հետո ես ուզում եմ պարզել՝ ուր եմ գնում: Մինչև որոշ չլինի վերջին կայարանը, թեկուզ աղոտ կերպով, ես դժվարանում եմ գրել: Երբ ամեն ինչ գրեթե կա մտքումս, ինձ զբաղեցնում է կառուցումը: Ամեն մի գրվածք նման է տան»: Արձակագիրն իր գրվածքները համոզիչ դարձնելու նպատակով հիմնականում նախընտրել է «*պատմողական ձևը*»՝ կարծելով, որ այն «հենց հայկական ազգային ձևն է»: Դա, ըստ նրա, «հնարավորություն է տալիս ոչ միայն գրվածքը համոզիչ դարձնել, այլև նյութը տալ խիտ, հավաք և նպատակասլաց»: Զորյանի արձակի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հեղինակը, պատկերելով կյանքի ամենատարբեր իրավիճակներ, *չի բացատրում երևույթը և եզրակացությունը թողնում է ընթերցողին*: «Կարիք չկա ընդգծելու ինչ-որ թեզ ու տենդենց: Թող ընթերցողն ինքը ջոկի լավն ու վատը... Կարիք չկա, որ գրողն ինքը բացատրի իր երկը, ինչպես անում էին այդ հին առակներում՝ տակին գրելով նրա «բարոյականը»... Թող բացատրեն ուրիշները, եթե դրա կարիքը լինի»,- նկատում է գրողը:

«ԽՆՁՈՐԻ ԱՅԳԻՆ»

Ինչպես հավաստում է Զորյանը, իր գրական երկերը հիմնականում ծնվել են *իրական կյանքի տպավորություններից*, երբեմն՝ մի արտահայտությունից («*Երկաթուղին*», «*Յանկապատ*», «*Կրակ*», «*Ծովանը*»...): «*Խնձորի այգին*» գրելու առիթը ևս եղել է կենսական փաստը, որն արձակագրին պատմել են իր հարազատները: «Ունևոր մի ծերունի սիրահարվել էր մի գաղթական լվացարարուհու, որին և խնձորներ է տանում նվեր... ,-գրում է Զորյանը և շարունակում:- Ես այդ սերը սկզբում նկարագրեցի «*Գաղտնիք*» պատմվածքում: Հետո դա իմ մեջ հասունացավ այլ ուղղությամբ. եթե ծերունին չմեռներ, ինչպես լինում է այդ «Գաղտնիք»-ի մեջ, այլ ամուսնանար նրա հետ և հին ժառանգների հետ նոր ժառանգ ունենար, ի՞նչ կլիներ... Ու ստացվեց ավելի ընդարձակ և

բովանդակությամբ տարբեր պատմվածք»: Ասել է թե՝ բարձրանալով փաստացի ճշմարտությունից՝ գրողը զարգացրել է դիպաշարը և հասել գեղարվեստական խոր ընդհանրացման:

«Խնձորի այգին» պատմվածքը գրվել է 1917-ին և հետագայում զետեղվել համանուն շարքում:

ԴԻՊԱՇԱՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Հինգ հատվածներից բաղկացած պատմվածքն ունի պարզ **դիպաշար**: Գործողությունները կատարվում են Օրան ավանում, որի հպարտությունը նրա արևելյան կողմում գտնվող խնձորի այգին էր: Ամբողջ գավառում հայտնի այդ ցածրապարիսպ այգին իսկական հրաշքի էր նման: Այն ոչ միայն տեղացիների պարծանքի առարկան էր, այլև այգեպանի՝ Մարտին ապոր սիրո և գուրգուրանքի աղբյուրը. «...մի իսկական այգի, որի ծառերը, կանոնավոր շարքեր կազմած, հավասար հեռավորության վրա, գրեթե հավասար բարձրությամբ կանգնած են, ինչպես պարի պատրաստ, ձեռք ձեռքի տված՝ գարնանը կրով ճերմակած բներով, ամառը՝ ժպտուն ու լուրջ խնձորներով բեռնված, իսկ աշնանը՝ տերևաթափ ու հոգնած, քաղից ասես վիրավոր»:

Մարտին ապերը դեռ երիտասարդական տարիներին իր տնկած այգով թե՛ իր ապրուստն էր վաստակում և թե՛ կյանքի գեղեցկությունը նրա մեջ փնտրում: Երբ մահանում է կինը՝ Սաբեթ նանը, նրա դուստրերից մեկը՝ Նոյեմը, և փեսան՝ գինեվաճառ Արտուշը, հաճախակի են դարձնում այցելությունները ծերունուն, հոգատարության սրված, կեղծ ցույցեր անում՝ մտածելով, որ նա վշտին չի դիմանա, շուտով կմեռնի, և իրենք կժառանգեն ունեցվածքը: Խնձորի այգին միայն իրենց մնալու շահադիտական նպատակով նրանք այդ ընթացքում ջանում են Մարտին ապորից հեռու պահել կրտսեր դստերը՝ Անգինին, և նրա ամուսնուն՝ դերձակ Վանեսին: Բայց կատարվում է անսպասելին. ծերունին ամուսնանում է իր այգում աշխատող եղեռնազարկ մի երիտասարդ կնոջ՝ «գաղթական» Նունուֆարի հետ: Այդ ամուսնության գլխին, սակայն, շուտով աղետ է կախվում: Մարտին ապոր արարքը «հարազատներին» չափազանց անարդար է թվում, և նրանք, լցվելով չարությամբ, անում են հնարավոր ամեն ստորություն՝ այգուն տիրանալու համար: «Եթե ժառանգ ունեցավ, էն էլ տղա, պրծավ»,- անհանգստացած ասում է կնոջն Արտուշը: Եվ Նոյեմը դիմում է ոճրագործության. եկեղեցու բակում ոտքով հարվածում է հղի Նունուֆարի որովայնին ու պատճառ դառնում նրա և դեռ չծնված երեխայի՝ «ապագա ժառանգորդի» մահվան: Իր

կյանքի մայրամուտը ջերմացնող կնոջ ողբերգական մահը տակնուվրա է անում Մարտին ապոր ներաշխարհը. խորտակվում են նրա բոլոր երազանքները, նրան այլևս թշնամի է թվում իրեն տասնամյակներ այնքա՜ն սիրելի խնձորի այգին:

Պատմվածքն ավարտվում է ցնցող պատկերով. գարնան մի առավոտ պահակ Սահակը տեսնում է, թե ինչպես «արխալուղի թևերը քշտած, փեշերը գոտում խրած»՝ Մարտին ապերը գետին է տապալում իր սիրելի այգու ծառերը: Մարդկանց գիշատչային էության դեմ ուղղված այդ հուսահատ արարքը, սակայն, անհասկանալի է մնում հասարակության համար: Այգեպանը համարվում է խելագար, և նրան արգելափակում են: Բարիք ու գեղեցկություն արարող Մարտին ապերը բանտարկվելու առաջին իսկ ամսին մահանում է, իսկ ոճրագործ դուստրը ժառանգում է նրա ունեցվածքը...

Դիպաշարային այս պարզ հյուսվածքի խորքում տեսնում ենք պատմվածքի **հիմնական գաղափարը**՝ սեփականատիրական շահը, ագահությունը և ընչաքաղցության կիրքը բարոյազրկում են մարդ էակին, անգամ դարձնում մարդասպան:

ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Պատմվածքում յուրօրինակ *կերպար* է **խնձորի այգին**. այն շնչավորում է, կարծես մասնակցում գործողություններին: Այգին հյուսվածքի **սկզբում** հրաշք գեղեցկուհի է, մարմնավորում է պտղաբերությունը, հարստությունը, կյանքի բանաստեղծականությունը, բարոյական արժեքն ու քնքշությունը, իսկ **վերջում** հանկարծ արյուն է իջնում նրա վրա: Կառուցվածքային այս *շրջանակումն* ավելի է սրում հեղինակի խոր անհանգստությունը գեղեցկության և ընդհանրապես բարոյականության կործանման համար: Հեղինակն այդ խորհրդանշական *կերպարի* միջոցով արծարծում է մարդկային հոգեբանության ու վարքագծի կարևորագույն խնդիրներ:

Գործողությունների կիզակետում **Մարտին ապոր** կերպարն է: Գեղեցկություն ու բարիք արարող այս մարդը խնձորի այգին ստեղծել է ամբողջ կյանքի ընթացքում: Նա այնքան հոգատար էր յուրաքանչյուր ծառի, ճյուղի ու տերևի նկատմամբ, որ համագյուղացիները նրան անվանում էին «ծառի բժիշկ». «Մարտին ապերը լավ գիտեր նաև, թե ե՛րբ ու ինչպե՛ս պետք է ջրել ծառերը, որ «ծաղիկները չթափվեն», և դա կոչվում էր «ծաղկաջուր». նա, կարելի է ասել, մասնագետի հեղինակություն ուներ. գյուղացիները նրան համարում էին «ծառի բժիշկ», և գյուղում ո՛ւմ ծառը վատ էր լինում, խորհուրդ էին տալիս դիմել Մարտին ապորը»:

Այգեպանը կյանքին ու աշխարհին նայում էր լուսավոր հայացքով: Նա մաքուր և ազնիվ սեր էր տածում Նունուֆարի նկատմամբ ու հաշվի չի առնում գյուղաշխարհում արմատակալած պայմանականությունները: Մարտին ապորը չեն կաշկանդում ո՛չ աղջիկների բարձրացրած աղմուկն իր ամուսնության համար, ո՛չ Նունուֆարի «գաղթական լինելը» կամ տարիքային մեծ տարբերությունը և ո՛չ էլ այն հանգամանքը, որ դեռ չէր լրացել Սաբեթ նանի մահվան մեկ տարին: Կյանքի բովով անցած և արյուն-քրտինքով տուն-տեղ ստեղծած մարդը, կատարելով իր ծնողական պարտքը, արդեն թոռնատեր ու տարիքն առած, ապրում էր միայնակ: Ճիշտ է, կարծես հարմարվել էր իր վիճակին՝ անմնացորդ նվիրվելով այգու աշխատանքներին, բայց տխուր էր հոգին: Եվ ահա, հանդիպելով տուն ու ընտանիք, հայրենիք կորցրած դժբախտ մի կնոջ, զգալով նրա ազնվությունն ու բարոյական մաքրությունը, գուցեև ինչ-որ տեղ կարեկցանքից դրդված, նրբորեն ամուսնության առաջարկ է անում և համաձայնություն ստանում: Ուրիշ խոսքով՝ նա իրավացիորեն տնօրինում է իր կյանքը և նոր կնոջ հետ սկսում է ապրել երջանիկ և հաշտ ու խաղաղ մթնոլորտում: Այդ ամենին գումարվում է մի նոր՝ անակնկալ երջանկության սպասում. Նունուֆարը երեխա պիտի ունենա: Նրանց, սակայն, սահմանված չէր երջանկություն. մարդկային բնական կյանքի դեմ են ելնում սեփականատիրական անզուսպ կիրքն ու անհագ ընչաքաղցությունը, և հարազատ դուստրը, հագած կեղծ բարեպաշտի դիմակը, դիմում է ոճրագործության:

Հայ գրականության կանացի հաջողված կերպարներից է **Նունուֆարը**: Չթափանցելով նրա նախընթաց կյանքի մանրամասների մեջ՝ հեղինակն ակնարկում է, որ Մեծ եղեռնին զոհ են գնացել նրա երեխաները, ամուսինը, և բախտի քմահաճույքով նա հայտնվել է Օրան ավանում: Ակնհայտ է, որ, ինչքան էլ տառապած, Նունուֆարը պահպանել է հայուհուն հատուկ բարոյական վեհությունը: Նա թեև լսում էր իր հասցեին արհամարհանքով նետվող «գաղթական» անունը և իր գոյությունը քարշ էր տալիս օրը օրին ապրուստ հայթայթելով, այնուամենայնիվ խելացի էր, չափազանց մաքուր և աստվածավախ: Մարտին ապերը նկատում է իր այգում ջանասիրաբար աշխատող կնոջ հոգեկան գեղեցկությունը և հասկանում, որ նա իրեն կարող է պարգևել սրտի երջանկություն: Նունուֆարը հարուստ ներաշխարհ ունեցող անձնավորություն է: Նա բնավ չի գայթակղում այգեպանին, պարզապես, երբ ամուսնության առաջարկ է ստանում, հասկանում է, որ ինքը ևս մարդ է, իրավունք ունի սիրվելու և սիրելու, արժանի է մարդկային ջերմության ու հոգեկան կապի: Նոյեմի կողմից ֆիզիկական խոշտանգում ստանալուց հետո

անգամ այդ վեհ հոգին Մարտին ապորը չի պատմում եղելությունը՝ մտածելով, որ հայրը վերջնականապես կթշնամանա դստեր դեմ:

Այսպես, ահա, պատմվածքի կառույցի կենտրոնում պահելով խնձորի այգին (այն, ի դեպ, նույն դերն է կատարում, ինչ Չեխովի բալենու այգին համանուն դրամայում)՝ արձակագիրը բոլոր հերոսների արարքներն ու ապրումները համախմբում է նրա շուրջ՝ նույն տեղից բխեցնելով բախումները:

Ստեփան Զորյանը հատկապես իր «փոքր» արձակով նոր աստիճանի բարձրացրեց մայրենի գրականությունը: Եվ իրավացի է մեր արձակի մյուս վարպետներից մեկը՝ Գուրգեն Մահարին՝ նրա մասին գրելով. «Տոհմիկ արձակագիր՝ իր ստեղծագործական բոլոր թելերով ու իր «նյարդով յուրաքանչյուր» կապված ժամանակի, հողի և կենդանի մարդկանց հետ, գիտակ և հաղորդակից համաշխարհային գրական մտքի նվաճումներին»:

Մեծերը Ստեփան Զորյանի մասին

«Դուք մեր ապագա վիպասաններից մեկն եք լինելու»:

Հովհաննես Թումանյան

««Տխուր մարդիկ» գրքում ես զգում եմ մեր ազգային գրականության և եվրոպական գրական ձևերի սինթեզ, ինչ պակասում էր մեզ մինչ այժմ»:

Դերենիկ Դեմիրճյան

«Ուշադրությունն դարձրեք, թե ինչպես դիտողականություն ունի, ինչպես է կարողանում կարճ մի նախադասությամբ արտահայտել առարկայի, երևույթի հանդեպ իր քնարական ու հումորիստական վերաբերմունքը»:

Հովհաննես Հովհաննիսյան

«Ստեփան Զորյանը արևելահայ գրականության մեջ բերեց նախ և առաջ փոքր պատմվածքի, նովելի կուլտուրան, պատմելու մեծ վարպետությունը, ստեղծագործողի ազնվությունը, ճշմարտացիությունը»:

Գեղամ Սարյան